

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ ՀՐԵՇՏԱԿԻՆ

Սուրբ Գրիգորը իր որդուն՝ Աիստակեսին իրեն փոխոնոչդ նշանակելուց հետո , ինքը գնում է լեռները : Այդ օրերից մեկի ժամանակ խնդրում է Աստծուն , որ հրեշտակներից մեկին ուղարկի իր մոտ , որպեսզի իմանա , թե մահանալուց հետո արդարների և մեղավորների հոգիները ուր են գնում և ինչ ճանապարհ են անցնում , և ինչ է պատահում նրանց այդ ճանապարհին : Հրեշտակների հետ մերթ ընդ մերթ տեսնվելով , իր իմացածը պատմում էր Արիստակեսին , որը երբեմն իր մոտ էր գալիս :

Աստված սուրբ Գրիգորի խնդրանքը ընդունում է և մի հրեշտակ է ուղարկում : Հրեշտակը գալով ասում է .

– Աստված ինձ ուղարկեց , որպեսզի քո բոլոր հարցերին պատասխանեմ . ինչ որ ուզում ես , հարցրու :

– Ով սուրբ հրեշտակ , - ասում է սուրբ Գրիգորը , - երբ մարդու հոգին մարմնից դուրս է գալիս , կարող է ամեն բան որոժել և իմանալ :

Հրեշտակ . - Այո՛ , կարող է ճանաչել և գիտե ինչ որ իրեն է վերաբերվում , ինչ որ պիտի լինի անմիջապես հասկանում է . եթե արդար է փառքի պիտի արժանան , իսկ եթե մեղավոր է , չարչարանքներ պիտի կրի :

Սբ. Գրիգոր . – Ինչ է հոգին :

Հրեշտակ . - Արդար հոգին լույսի նման է , ու արևի պես փայլում է , ինչպես Պողոս առաքյալն է ասում .

**« Մեր արտաքին մարդը ապականվում է , բայց մեր ներքին մարդը նորոգվում է օրըստօրե »** (Բ. Կրնթ.4.16):

Սա մարմնի և հոգու մասին է : Իսկ մեղավորի հոգին խավարի պես մշուշ է ու մեղքով սևացած :

Սբ. Գրիգոր . – մեղավորի հոգին ինչպես եք առնում :

Հրեշտակ . – մեղավորի հոգին առնելու համար շատ բարկությամբ ենք գալիս ու հրեղեն սրով ենք երևում նրան : Մեզ տեսնելուն պես վախից լեզուն բռնվում է , աչքերը փակվում են , գլուխը թաքցնում է , երեսը դարձնում , ուզում է փախչել , բայց չի կարող , որովհետև բոլոր կողմերից ենք տեսնվում : Այն ժամանակ հոգու աչքերը բացվելով , նա գնալիք մութ ճանապարհները և քաշելիք չարչարանքները բացահայտ է տեսնում : Իր շուրջը եղող ազգականներին , զավակներին և բարեկամներին է նայում . աղաչում է , գոռում է , որ իրեն ազատեն , բայց նրան չեն լսում , որովհետև լեզուն կապված է : Ինքը կարծում է , թե ծայնը դուրս է գալիս , բայց ոչ ծայնն է ելնում , ոչ էլ խոսքերն են հասկացվում :

Սբ. Գրիգոր . – Հոգին հրեշտակն է առնում , թե ինքն իրեն է անջատվում :

Հրեշտակ . - Հոգին մարմնի ցավից անջատվում է և հրեշտակն առնում – տանում է :

Սբ. Գրիգոր . – Մեղավորի հոգին ինչի է նման :

Հրեշտակ . – Ինչպես ասացի , մեղքերի մեջ թաղված , կեղտոտ և խավար մի բան է , այնպիսի գեշ հոտ ունի , որ հնարավոր չէ մոտենալ :

Սբ. Գրիգոր . – Իսկ արդարի հոգին ինչպես եք առնում իր մահվան ժամանակ :

Հրեշտակ . - Երբ գալիս ենք արդեարի հոգին առնելու , կարծես իրեն հարսանիքի ենք հրավիրում : Երբ մեզ տեսնում է , հոգով – սրտով ուրախանում է , որովհետև գիտի , որ այս անցավոր ցավ ու կսկիծներից դրախտի անհուն ուրախության և հանգստության պիտի տանենք : Մարդկանց միջից հրեշտակների մեջ պիտի գնամ

ասելով՝ ուրախանում է , այն ժամանակ արդարի հոգին ոռնում ենք և մեծ պատվով տանում երկինք :

Երկնքի **առաջին** աստիճանում դևեր են գալիս , բայց արդարների հոգիները արևի պես փայլում են , որից դևերի աչքերը շլանում են և չեն կարողանում նայել:Միայն իմանում են , որ արդարի բերանը շարունակ աստվածավայել խոսքեր է ասել , միշտ ողորմություն է արել , եկեղեցի գնալով՝ քահանային խոստովանվել: Սուրբ Հաղորդությունը այդ հոգու վրա մատանու ադամանդի պես է երևում , որից դևերը մնում են ապշած ու չեն կարողանում մոտենալ նրան :

**Երկրորդ** աստիճանը շատ մութ է , բայց արդարի հոգին արևի պես փայլում է և իր ճանապարհը լուսավորում :Իսկ մեղավորի համար ամեն ինչ խավար է :

**Երրորդ** աստիճանը շատ ցուրտ է բայց արդարի հոգին Քրիստոսի սիրուց այքան է ջերմացած , որ ցուրտ չի զգում :

**Չորրորդ** աստիճանը տաք է , բայց արդարի հոգին զով է :

**Հինգերորդ** աստիճանը նեղ ճանապարհներից է բաղկացած , որոնց նմանը չկա , բայց արդարի ճանապարհը լայն է :

**Վեցերորդ** արևից առավել պայծառ լուսեղեն կամարներ են , որոնցով արդարի հոգին գմայլվում է :

**Յոթերորդ** աստիճանը հրեշտակների կարգն է : Երբ արդարի հոգին տեսնում , ուրախանում են : Իսկ երբ մեղավորի հոգին են տեսնում՝ տրտմում են :

**Ութերորդ** աստիճանը Տերություններն ու Ջորություններն են . նրանք արդարին տեսնելով , սաղմոսներ երգելով՝ փառաբանելով են դիմավորում :

Վերջապես արդարի հոգին Երկնավոր Թագավորի առաջ կանգնում և երկրպագում է : Սուրբ Չայնն ասում է . **«Բարի՛ եկար , սիրելի՛ որդիս , աշխարհի մեջ չարչարվեցիր , հիմա հանգիստդ մտիր»** : ԵՎ հրեշտակները անտեսանելի լուսեղեն պատմուճաններ բերելով հագնում են նրան և տանում մյուս արդարների մոտ :

Սբ. Գրիգոր . – Մեղավորի հոգին ուր է գնում :

Հրեշտակ . - **Առաջին** աստիճանում իրեն անթիվ դևեր են դիմավորում . ոմանք հարստության , ոմանք մախանձի , ոմանք բարկության և ուրիշներ՝ այլևայլ փոծություններ տալու : Մեծ աղմուկ են հանում և ուղում են հրեշտակի ձեռքից հափշտակել այն :Խեղճ հոգին շատ է չարչարվում , լալիս է , կանչում , օգնություն չկա: Դևերը չեն կարող հոգին գրավել , որովհետև մինչև դատաստանի օրը այդ արգելված է :

**Երկրորդ** աստիճանը խավարով է պատած : Շատ չարչարվելուց հետո ցուրտ աստիճանին է հասնում , հետո տաք աստիճանին բավականին այրվելուց և ողբալուց հետո նեղ ճանապարհներ է մտնում , լուսեղեն աստիճանին է հասնում , բայց հրեշտակները տրտմում են : Ութերորդ աստիճանի Տերություններն ու Ջորություններն դեմ են կանգնում և տանող հրեշտակին հրամայում են , որ ետ դառնա և մյուս մեղավորների մոտ տանի և մինչև Քրիստոսի դատաստանի օրը այնտեղ պիտի մնա: Դատաստանի օրը մարմինը հոգու հետ միանալով , դժոխքի անշեջ կրակը պիտի նետվի, ուր հավիտյանս հավիտենից պիտի չարչարվի , ինչպես Քրիստոսն է ասել .**« Եվ նրանք պիտի գնան դեպի հավիտենական տանջանք»** (Մատթ. 26.46):

Սբ. Գրիգոր . – Ինչ է Աստված:

Հրեշտակ . - Աստված Մեկ է և Սուրբ ու որևէ բանի չի նմանվում :Նրան անկարելի է տեսնել , բայց արդարները և սուրբերը դատաստանի օրը Նրա Սուրբ Երեսը պիտի տեսնեն :

Սբ. Գրիգոր . - Երկինքը քանի աստիճանից է բաղկացած և հրեշտակները որ աստիճանում են գտնվում :

Հրեշտակ. - Երկինքը բաղկացած է տասը աստիճաններից: Հրեշտակները վերջին աստիճանում են գտնվում , որ լուսեղեն երկինք է ասվում : Հրեշտակներինը ինը կարգ է . բոլորն էլ Սուրբ Երրորդություն են փառաբանում :

Սբ. Գրիգոր. - Աստծո փառքը և շնորհը աշխարհին և մարդկանց ինչպես է տրվում :

Հրեշտակ. - Աստծո շնորհը նախ հրեշտակներին է տրվում և հետո մարդկանց:

Սբ. Գրիգոր. – Ննջեցյալների հոգու համար որն է ավելի օգտակար , պահքը, թե ողորմությունը:

Հրեշտակ. - Ազոթքը և ողորմությունը ննջեցյալների համար է , իսկ պահքը ` պահողի համար : Սուրբ Պատարագ մատուցողը , եթե արդար է , ննջեցյալների համար օգտակար կլինի , եթե նրանք արդար են , իսկ մեղավորների համար որևէ բան օգուտ չունի :

Սբ. Գրիգոր. – Մի մեղավոր եթե մեռնելուց առաջ խոստովանի «մեղա» ասի և լացով սուրբ հաղորդություն ուզի , արժանի է նրան տալ :

Հրեշտակ. - Այո , արժանի է , որովհետև Աստված շատ ողորմած է , ինչպես Հիսուս ասաց . **«Նա , ով Մարմնովս և Արյունովս հաղորդվի , նա ինձ հետ է նաև Ես նրա հետ պիտի լինեմ»:** Բայց պետք է մեռնելուց առաջ հաղորդվել , որովհետև մարդ չգիտի , թե երբ պիտի մեռնի : Եթե մեղավորի լեզուն կապվի և «մեղա» չասի , անպայման դժոխք կգնա , ինչպես որ Հիսուս զգուշացրեց **«Արթու՛ն եղեք , որովհետև չգիտեք թե տանտերը երբ կգա»:**

Սբ. Գրիգոր. – Որ մեղքն է ավելի մեծն դատաստանի օրը ամոթահար է թողնում մարդուն :

Հրեշտակ. - Այն մեղքն է , որ մարդ փոքր մեղք համարելով չի խոստովանում:

Սբ. Գրիգոր. – Խոստովանությունը , ապաշխարհությունը, լացն ու կոծն ինչպես են քավում մեղքերը:

Հրեշտակը.- Ինչպես մոմը կրակից է հալչում , խավարը փախչում է լույսից, խոստովանությունն ու ապաշխարությունն էլ ոչնչացնում են մեղքը:

Սբ. Գրիգոր. – Մի մարդ եթե խոստովանի և նորից մեղք գործի , հոտ նորից խոստովանի , դարձյալ թողություն կստանա :

Հրեշտակ . \_ Այո, նորից թողություն կստանա . ինչպես Հիսուս Պետրոս առաքյալին ասեց. **«Եթե մեկը քո դեմ նույնիսկ 70 անգամ 7 մեղք գործի , և մեղա ասի , պետք է ներես»:** Իսկ շատ ավելի ողորմած է և միշտ ներում է , եթե զղջումով խոստովանեն:

Սբ. Գրիգոր. – Եթե մեկը լեռան վրա կամ անապատում գտնվի և մեռնելու ժամանակ մեղքերը հիշելով ` առանց քահանայի ու խոստովանության «մեղա» ասի, թողություն կստանա :

Հրեշտակ. - Ամեն մարդ շաբաթը մեկ անգամ պետք է խոստովանի իր մեղքերը . կամ գոնե տարիմ հինգ-վեց անգամ : Իսկ եթե քահանա չկա , կարող է որևէ մեկին խոստովանել : Քրիստոս այն կընդունի , որովհետև բոլոր այն քրիստոնաները , որոնք մկրտության Սուրբ Հաղորդությանը մասնակից են եղել , Սուրբ Երրորդությունն են դավանում և Քրիստոսի խաչին են երկրպագում , նրանք Իր արյունով են գնված:

Սբ. Գրիգոր. – Ինչ բան է պահքը :

Հրեշտակ. – Պահքը մարդկանց նմանեցնում է հրեշտակների , դևերի դեմ է կռվում և սատանային արգելք է լինում , որ մարդկանց մեջ մտնելով նրանց չմոլորեցնի:

Սբ. Գրիգոր. – Ինչ բան է աղոթքը:

Հրեշտակ. - Աղոթքը մարդու հոգին Աստծուն է կապում: Շարունակ աղաոթող մարդը մեղք գործելու ժամանակ չի ունենա:

Սբ. Գրիգոր. – Ինչու է սաղմոսի մեջ գրված , թե մեղավորի մահը չար է :

Հրեշտակ . - Եթե մի մարդ առանց խոստովանության մեռնի , իսկապես այդ մարդու մահը չար է : Քանի որ դատաստանի օրը պիտի լսի այն զարհուրելի ձայնը , թե `

**«Հեռացեք ինձանից անիծյալներ դեպի հավիտենական կրակի մեջ , որովհետև միշտ սատանայի հետևից գնացիք»:** Աստված որ այնքան ողորմած է , չզղջացող մեղավորներին չի ներում , այլ միշտ բարկությամբ է նայում :

Սբ. Գրիգոր. – Կարելի է արդյոք մահը սուրբ ասել :

Հրեշտակ . - Այո՛, որովհետև արդարը չխաբվեց աշխարհին , աշխարհի ցանկությունների համար իրեն մեռած համարեց և իր հույսը Քրիստոսի արքայության վրա դրեց: Դրա համար արդարի մահը սուրբ է : Նա միշտ սպասում է մահվան ինչպես Պողոս առաքյալն է ասում . **«Ցանկանում եմ ժամ առաջ այս մարմնից դուրս գալ և Քրիստոսի մոտ գնալ»** , որովհետև արդարների համար այս աշխարհը բանտ է :

Սբ. Գրիգոր. – Դատաստանի օրը մարդուն իր գործերի համեմատ ինչ է տրվելու:

Հրեշտակ. - Արդարներին այնպիսի փառք է տրվելու , որ Պողոս արաքյալի ասածի պես ոչ աչքն է տեսել , ոչ էլ ականջը լսել և ոչ էլ մարդ կարող է երևակայել : Մեղավորներին էլ նմանը չունեցող չարչարանքներ կտրվի: Արքայության փառքը մտքից վեր է և դժոխքի չարչարանքն էլ խելքից դուրս է :

Սբ. Գրիգոր. – Որ գործն է ավելի օգտակար:

Հրեշտակ . - Չղջուը , խոստովանությունը և ապաշխարհությունը: Ով ասաաաաայս երեք գործերը կատարի , նրա համար, անտարակույս ,արքայությունը պատրաստ է :

Սբ. Գրիգոր. – Որ գործն է ամենավատը:

Հրեշտակ .- Ամենավատը , եթե մարդ առանց զղջման և խոստովանության մեռնի .

այդպիսին , անտարակույս հավիտենական դժոխք կգնա :

Սբ. Գրիգոր. – Եթե մեկը մեղքերը խոստովանի , բայց առանց ապաշխարհելու մեռնի, ինչ կլինի նրա հետ:

Հրեշտակ. - Եթե բոլորովին զղջացել է , եկեղեցու աղոթքն ու պատարագը նրա մեղքերը կքավեն , որովհետև , եթե ողջ լիներ , անպայման պիտի ապաշխարհեր:

Սբ. Գրիգոր. – Մարմնից դուրս եկած հոգիները ինչ են ցանկանում :

Հրեշտակ . - Արդարի հոգին ցանկանում է դատաստանի օրը արքայության անբավ փառքը վայելել , իսկ մեղավորին հոգին խորհում է , թե դատաստանի օրը իր վիճակը ինչ պիտի լինի և դժոխքի չարչարանքները մտաբերելով՝ միշտ լալիս է :

Սբ. Գրիգոր. – Գնացող հոգիները մնացողներին հիշում են , թե բոլորովին մոռանում են :

Հրեշտակ . - Անպայման հիշում են : Եվ եթե ապրողները նրանց անունով ողորմություն բաժանեն և Սուրբ պատարագ մատուցեն , ապա ննջեցյալների հոգիներն

էլ նրանց համար կաղոթեն, որպեսզի Աստված բարի օրեր պարգևի և փրկի զանազան փորձություններից. հակառակ պարագայում անհիշատակ կմանան :

Սբ. Գրիգոր. – Հոգիները իրար տեսնել, ճանաչել և սիրել ունեն:

Հրեշտակ. - Տեսնել չլինել՝ կույրերի պես կլինեին: Ճանաչել և սիրել չլինել՝ անասունի պես կլինեին:

Սբ. Գրիգոր. – Արքայության մեջ ինչպես է արտահայտվում սերը միմյանց նկատմամբ:

Հրեշտակ . - Այնտեղ մարմնավոր սեր չկա , այլ հրեշտակների պես հոգևոր սեր ունեն միմյանց նկատմամբ:Ու բոլորը հավիտենական փառքով զարդարված , անդադար ուրախությամբ փառաբանում են Աստծուն:

**Այստեղ գլխավոր հարցերս վերջացան:**